

BACCALAURÉATS GÉNÉRAL ET TECHNOLOGIQUE

SESSION 2017

ARMÉNIEN

Épreuve facultative

Toutes séries sauf STD2A, STI2D, STL, STMG et ST2S

Durée de l'épreuve : 2 heures

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions.

L'usage des calculatrices et des dictionnaires est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

«Փոքր քայլերով պետք է սկսիլ», - կ'ըսէ ընտանեկան գործի
հիմնադիր 24տարեկան Սոնան

ՀԵՏՔ¹
Նոյեմբեր 20, 2016

Մարինէ Մարտիրոսեան

Սոնան 24 տարեկան է, կրցած է հիմնել փոքր գործ մեծ ծրագիրներով²:
Մասնագիտութեամբ նկարագարող³ է: 20 տարեկանէն սկսեալ կը զբաղի
ձեռքի աշխատանքներով: Սկիզբը զարդեր կը պատրաստեր՝ օգտագործելով
գամեր⁴, պտուտակներ⁵, ելեկտրական հոսանքի լարեր: [...]

5 Առաջին աշխատանքները տեղադրած էր ֆէյսպուքի⁶ էջին վրայ, եւ
անուանած էր «SonSation»՝ քիչ մը ձեւափոխելով «sensation» (տպաւորիչ լուր)
բառը: Կ'ըսէ թէ «ֆէյսպուքը» մինչեւ այսօր վաճառքի համար ամենայարմար
հարթակն⁷ է, թէեւ գործերը արդէն ոչ միայն համացանցի վրայ կը ծախուին⁸:

10 «Սկիզբը չէի երեւակայեր, որ կրնամ խանութ բանալ, յետոյ
երեւակայեցի: Իմ հնարաւորութիւններս լաւ գիտեմ, եթէ նոյնիսկ
դժուարութիւններ ըլլան, դրական կը տրամադրուիմ անոնց նկատմամբ: [...]», -
կ'ըսէ Սոնան:

15 Առաջին խանութը Երեւանի Վարդանանց փողոցը կը գտնուէր, երկու
տարի առաջ տեղափոխուած են Փարպեցի փողոց: Կը պատմէ, թէ
ապսպրանքները շատ էին, չէր հասցներ, այդ պատճառով ալ գործին միացեր
են նաեւ ընտանիքի անդամները՝ մայրը, քոյրը, ամուսինը: Գործը ընտանեկան
է դարձած:

¹ ՀԵՏՔ – journal en ligne arménien

² ծրագիր - projet

³ նկարագարող – ici . designer

⁴ գամ – clou

⁵ պտուտակ – boulon

⁶ ֆէյսպուք - Facebook

⁷ հարթակ – plateforme

⁸ համացանց – internet

խանութ ունենալէ առաջ, ապրանքները տունը կը պատրաստեր , իսկ հիմա՝ խանութը:

20 «Մեր գործերը կը տարբերին ոճով ու նիւթի ընտրութեամբ, եթէ նայիք, ոչ մէկ աշխատանքի մէջ բարդութիւն կայ: Որեւէ աշխատանքի նայելու ժամանակ, կը տեսնէք, որ բոլորն ալ կրնան ընել: Պարզութեամբ, նիւթի ընտրութեամբ. որոշ նիւթեր, որոնք մտքեդ չես անցըներ, որ կրնաս պատրաստել, մենք կը գործածենք », - կը նշէ Սոնան:

25 Հիմա Սոնան ու հարազատները կը պատրաստուին Նոր Տարուան ցուցահանդէսներուն: Կ'ըսէ թէ ամենասիրած տօնն է Նոր Տարին: Ապսպրանքներն ալ շատ կ'ըլլան տօներու ատեն՝ Նոր Տարուան, Վալենտինի օրուան առթիւ, կիներու տօնին: Կը զբաղին նաեւ որոշ նիւթերու շուրջ հարսանիքներու⁹ զարդարանքներով: [...]

30 Սոնային գլխուն վրայ՝ պատին, գրուած է. «Երազներդ վերածէ ծրագիրներու »: Հիմա սա է անոր կարգախօսը¹⁰ : Կ'ըսէ՝ երազներու փոխարէն ծրագիրներ պետք է ունենալ: Օրինակ՝ կը մտածէ խանութը ընդլայնելու մասին: «Այդ ուղղութեամբ կ'աշխատինք, անշուշտ, կը փորձենք պզտիկ-պզտիկ քայլերով առաջ երթալ», - յետոյ կ'աւելցնէ, որ երազը միայն երազ պիտի չմնայ:

⁹ որոշ նիւթերու շուրջ հարսանիքներ – mariages à thème

¹⁰ կարգախօս – slogan

QUESTIONS

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Քանի՞ տարեկան է Սոնան:
2. Ի՞նչ մասնագիտություն ունի Սոնան:
3. Ո՞ր փողոցը կը գտնուի Սոնային խանութը:
4. Ինչո՞վ կը տարբերին Սոնային գործերը:
5. Ո՞րն է Սոնային ամենասիրած տունը:
6. Թարգմանել 12-րդ տողին «Առաջին խանութը» բառերին մինչև 16-րդ տողը «է դարձած» բառը:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats traitent l'ensemble des questions (70 mots minimum par question).

1. Սոնային կարգախօսն է «Երագներդ վերածե՛ ծրագիրներու»: Համաձայն էք Սոնային հետ: Դուք յաջողած էք ձեր սեփական երագները ծրագիրներու վերածել:
2. Սոնան կ'ըսէ, թէ «Ֆէյսպուքը» ծախելու համար ամենայարմար հարթակն է: Բացատրեցէք, թէ ինչու: